

Ամփոփվել են դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի արդյունքները

19.03.2015թ.

Փետրվարի 21-ից մարտի 9-ը ներառյալ «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում անցկացվեց մարզի դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը, որին 10 առարկաներից մասնակցեցին մարզի հանրակրթական դպրոցների 470 աշակերտ, 6 առարկաներից՝ առցանց կազմակերպված օլիմպիադայի երկրորդ փուլի արդյունքներով՝ 37 աշակերտ:

Օլիմպիադայի մարզային փուլը կազմակերպվել և անց են կացվել ՀՀ Սյունիքի մարզպետի 2015 թվականի փետրվարի 17-ի N 17-Ա որոշմամբ ստեղծված կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների կողմից:

Ըստ ոլորտի պատասխանատուների՝ մարզային օլիմպիադայի արդյունքները գոհացուցիչ են և լավագույն աշակերտները կարողացան ցուցաբերել իրենց գիտելիքները գրեթե բոլոր առարկաներից: Քիչ թվով աշակերտներ են մասնակցել մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, ինֆորմատիկա և աստղագիտություն առարկաների առցանց օլիմպիադաներին: Հիմնականում ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Կապանի, Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների քաղաքային դպրոցների աշակերտները: Մրցանակային տեղերի մեծ մասը բաժին է ընկել մարզի 5 ավագ դպրոցներին, քանի որ հիմնական դպրոցներից միայն 9-րդ դասարանցիներն են մասնակցել օլիմպիադային: Ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Ագարակի և Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցները, գյուղականից՝ Աճանանի, Խնձորեսկի, Վերիշենի, Գորհայքի, Բոնակոթի, և Սառնակունքի դպրոցները:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են ստացել մարզային փուլում առաջին և երկրորդ տեղ գրաված 76, առցանց օլիմպիադայի երկրորդ փուլի արդյունքներով՝ 37 աշակերտներ: